

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Անցեալ տարի «Լուսօր» հանդիսում ի լիշատակ Արուիեանի մահուան լիսնամեակի՝ հրատարակեցինք մեր աշխատակից պ. Ներսէս Տէր-Կարապետեանի (այժմ ընտրուած քահանայացու Բագուի «Սև» և «Սպիտակ» քաղաք կոչուած արուարձանների համար) կազմած՝ Խ. Արուիեանի կենսագրական նիւթերը, իսկ անցեալ գըրքումն էլ պ. Իս. Յարութիւնեանի մի ընդարձակ քըննադատութիւնը՝ նորա «Վէրք Հայաստանի» մասին, որոնք երկուսն էլ հրատարակուած են նաև առանձին գրքոյկներով:

Այժմ՝ հայ մամուլի ներկայացուցիչներն ու գրագէտները, կամենալով միասին տօնել Արուիեանի մահուան լիսնամեայ յօբելեանը՝ որոշեցին հոգեհանգիստ կատարել և մի ճոխ երեկոյթ տալ, որ նուիրուած կըլինի յատկապէս Արուիեանի լիշատակին: Տօնախմբութիւնըն իրագործելը յանձնուած է մի մասնախմբի, իսկ հանդիսի կատարումը լետաձգուած է մինչև առաջիկայ սեպտեմբեր:

Գ Լ Ա Գ Ս Տ Օ Ն

Սոյն տարուայ մայիսի 6-ն աշխարհը կրեց մի մեծ հարդուած: Այդ օրը Հովարդէնում կնքեց իւր երկրայինը դարուս ամենամեծ մարդասէրը—Վիլիամ Գլադստօն:

Նա, որ վաթսուոն հինգ տոկուն տարիներ շարունակ բերկրութեամբ և ուրախութեամբ գեղել է իւրա-

քանչիւր անհատի սիրտ, որ միշտ վաճան ու պատնէշ է հանդիսացել մարդկութեան սպառնացող թշուառութիւնների ու պատուհասների դէմ, որ ազգութիւնների մէջ խտրութիւն չդնելով և շտարբերելով իւր հայրենակիցն ուրիշներից, սիրել է ամենքին աւետարանի դաղափարներին յենուած—սիրել բոլորին հաւասար իւր անձի նման, նա իւր մահով չէր կարող հարուած չը պատճառել բովանդակ աշխարհին:

Ընդհանուր մարդկութիւնը մեծ սիրով կապուած էր Գլադստոնի հետ: Իւրաքանչիւր թշուառի հայեացքը դարձրած էր դէպի նա: Նրա կեանքն ամենքի համար այնքան քաղցր էր, որ երբ մեծ ծերունին հիւանդ պառկած էր անկողնում, Հովարդէնի պալատում հեռագիրների հեղեղ էր թափւում: Ամենքն էլ սրտատրոփ էին նայում անողորմ հիւանդութեան, առողջութիւն էին ըզձում—առողջութիւն ընդհանուրի հօր, մարդկութեան եղբօր և թշուառների մխիթարչի համար:

Գլադստոնն իւր կենսութեան ձայնը հնչեցրեց դեռ երիտասարդ հասակում: Նրա հայրը—Ջօն Գլադստօն Լիվէրպուլում յայտնի առևտրական էր, միևնոյն ժամանակ և անուանի գործիչ:

Ջօն Գլադստօնը բարեկամական մեծ կապեր ունէր այն ժամանակուայ նշանաւոր անգլիացիների հետ, որոնք, յաճախ այցելելով նրա ընտանիքին, մեծ ազդեցութիւն էին ներգործում փոքրիկ Վիլիամի վրայ, որ իւր կողմից դեռ մանուկ հասակում իւր մտքերով և դատողութիւններով զարմացնում էր ամենքին:

Վիլիամ Գլադստօնը ծնուել է 1809 թուականին և մինչև տասներկու տարեկան դառնալը ապրել և կրթութիւն է իրանց ընտանիքում: Իւր սկզբնական ուսումը նա ստանում էր տեղական քահանայից և ապա մի տիրացուից, որ լաւ կարծիք չուներ ապագայ նշանաւոր

եղևմտից նախարարի մաթեմատիքական ընդունակութիւնները մասին:

1821 թ. նրան ուղարկեցին Իտոնի ուսումնարանը, որ գտանուում էր Լոնդոնից երեսուն վերստ հեռավորութեան վերայ: Իւր ձիրքերի և ընդունակութիւնների շնորհիւ նա առանց պատրաստուելու, միանգամից մըտաւ առաջին դասարանը, որ այն ժամանակ դա զարմանալի երևոյթ էր համարուում:

Այդ ուսումնարանը չնայած, որ պատկանում էր արիստոկրատիական դասակարգին, այլ և շատ մօտ էր արքունի դրան, այնու ամենայնիւ նրա ուսման ծրագիրը շատ ողորմելի էր: Եւ անշուշտ եթէ չլինէին բընական ընդունակութիւնները, Գլադստոնն այդտեղից ոչինչ չպիտի տանէր:

Իտոնի ուսումնարանն աւարտելուց յետոյ նա դիմեց բարձրագոյն ուսում ստանալու, և երբեմն Կալկաթայի արքեպիսկոպոս Դօքտոր Թէօրների մօտ երկու տարի նախապատրաստուելով, ամենայն լաջողութեամբ մտաւ Օքսֆորդի համալսարանը, տարեկան հազար ուրբի թոշակ ստանալով, որի մէջ սակայն ինքը կարիք չունէր: Բայց կար մի հիմնարկութիւն ևս, առ որ նա կեդրոնացրել էր իւր բոլոր ուշադրութիւնը:— Դա Օքսֆորդի Union կամ ուսանողական պարլամենտն էր:

Գլադստոնը Union ի կանգիդատ էր հաշուում դեռ Օքսֆորդ եկած օրից, միայն այդտեղ մտնելու համար սկզբում շատ դժուարութիւնների հանդիպեց, իսկ իւր արտասանած մի հրաշալի ճառով նա միանգամայն այդ հիմնարկութեան քարտուղար ընտրուեց և կարճ ժամանակից յետոյ բազմեց նախագահի աթոռին:

1832 թ. նա աւարտեց համալսարանը և ստացաւ այն ընծան, որ տրւում էր աւարտողներից միմիայն մէկին — այն էլ տրւում էր մեծ դժուարութեամբ:

Այդ օրն Անգլիայի պատմութեան մէջ նշանաւոր դարագլուխ պէտք է համարել: Այդ օրը Գլադստօնը ինչպէս մի նոր Խորայէլ բաց ճակատով կանգնեց Անգլիական ազգի դիմաց և կեանք և ազատութիւն գոչեց լօրդերից, կալուածատէրերից և հոգեւորականներից իրանց ստրուկ դարձրած խեղճերի համար: Այդ օրը Անգլիայի գլխին ծփծփաց նրա դրօշը, որի ծալքերում գետեղուած էր խղճի ազատութեան, իրաւունքների հաւասարութեան և ընդհանուր մարդասիրութեան գաղափարները: Նա ընտրուեց պարլամենտի անգամ և սկսեց իւր երկաթէ կամքով ու անյողդողդ ուղղութեամբ ճիգ թափել իւր կենսատու ծրագիրները պսակելու:

1852-ն նա ընտրուեց ելեմտից նախարար: Այդ ասպարէզում նա չտեսնուած, մինչև իսկ առասպելա կանութեան հասցրած յառաջագիմութիւն ցոյց տուաւ: Նրան յանձնուած գրեթէ դատարկ գանձարանը կարճ ժամանակում ահռելի գումարներ մտաւ, իսկ առևտուրը հասաւ արնախիտ ծաղկած դրութեան, որ այդ ժամանակը անգլիական առևտրականութեան մի նոր, մի ոսկի դարագլուխ համարուեց: Նրա հակառակորդները խոնարհում էին, մինչև իսկ ոմանք նրա գործերը հրաշք էին համարում: Ապա նա զանազան բեֆօրմաներ մտցրեց կառավարութեան օրէնքների մէջ. — հեշտացրեց բանուոր դասակարգի դրութիւնը, մեծ արտօնութիւններ շնորհեց առևտրական դասակարգին և ամեն տեղ տիրեց մի նոր շարժում, ամեն տեղ նեղուածը շունչ առաւ և գլուխ բարձրացրեց: Նա բանուորներին և արհեստավորներին քաղաքացիական իրաւունքներ տուաւ և ամբօրեային դրութիւնից նրանց դարձրեց պատուաւոր ժողովուրդ, որ այնուհետև հաւասար բոլորի հետ մասնակցեց պարլամենտական և այլ զանազան ընտրութիւնների: Եւ Գլադստօնն այնուհետև դարձաւ միլիօնաւոր բանուորների կռուքը:

Վաթսուկական թուականներին Գլադստոնն իւր ձայնը բարձրացրեց ճնշուած ու նեղուած Նապոլիի և Սիցիլիայի համար, որ և մի կողմից շնորհիւ նրա եռանդի, միւս և աւելի զօրեղ կողմից — Գարիբալդիի անձնուէր քաջութեան, Իտալիայից արտաքսուեց ապիկար և անպէտք Ֆերդինանդը և Նապոլիի ու Սիցիլիան ազատութեան հոգի առած միացան Իտալական կառավարութեան հետ:

Գլադստոնի օգնութիւնը այդ ժամանակներում հասնում էր և տաճկական բռնակալութիւնից նոր շունչ առած Յունաստանին, որին և վերջը նրա աշխատանքի շնորհիւ յատկացուեց Իօնիկեան կղզիները: Այդ կղզիները դեռ 1815 թուականից գտնուում էին Անգլիացոց հրամանատարութեան տակ, բայց Յունաստանն ազատուելուց յետոյ կղզիների բնակիչները կամեցան, որ իրանց երկիրը ինչպէս հնումը, նոյնպէս և այժմ միացած լինի Յունաստանի հետ: Այդ նպատակով կղզիների վերայ տեղի էին տալիս զանազան խառնակութիւնների:

Եւ ահա հնչում է Գլադստոնի ձայնը: Նա պահանջում է արգարութիւն, ճնշուածին ազատութիւն և խօսում է ընդհանուր մարդասիրութեան և միացած եղբայրութեան համար:

Անգլիական կառավարութիւնը կամենալով վերջ դնել այդ խառնակութիւններին, իրան Գլադստոնին իբրեւ քննիչ ուղարկեց իմանալու թէ՛ բոլոր Իօնիկցիներն են կամենում կղզիները միացնել Յունաստանի հետ, թէ՛ գուցէ խառնակութիւնների պատճառը միմիայն բաղտախնդիրների մի խումբ է:

Եւ գնաց Գլադստոնը, շրջեց բոլոր կղզիները, ընդունեց զանազան պատգամաւորութիւններ, հաւաքեց մանրամասն տեղեկութիւններ, խօսեց նրանց սենատի հետ Կորֆու կղզում, կազմեց նրանց համար կոնստիտուսիօն կառավարութեան մի գեղեցիկ ծրագիր, ապա

վերադարձաւ Անգլիա և լալտնեց, որ բոլոր կղզիներէ ընակիչները միաձայն կամենում են միանալ Յունաստանի հետ, ուրեմն և պէտք է միացնել:—Այդպէս էլ եղաւ: Այդտեղ ևս փառաւոր կերպով պսակուեց մեծ մարդասէրի գեղեցիկ աշխատանքներէց մէկը:

Հասաւ եօթանասնական թուականները, երբ Բալկանեան թերակղզու քրիստոնեաները այլ ևս անգոր գտնուելով տաճկաց բարբարոսութիւններին հանդուրժել, սկսեցին ամենուրեք ազատութիւն գոչել:

Սերբիան և Ջերնոգորիան բացայայտ կերպով պատրաստուեցին պատերազմի: Տաճկաստանն այդ միջոցում ծայրահեղ նեղութեան մէջ ընկաւ: Դժուարութիւնները ոչ միայն դրսի կողմից էին, այլ և ներսից: Դրամական ծայրահեղ պակասութիւնը սուլթանին հասցրեց մինչև իսկ «ինքնասպանութեան»: Այդ միջոցներում Բուլղարիայումն էլ սկսուեցին շարժումները, որից յետոյ տաճիկները հասկացան թէ ինչ է սպասում իրանց: Եւ դիմեցին իրանց այն օրէնքին, որ թէպէտ սուլթը ու նուիրական է իսլամի որդւոց համար, բայց միևնոյն ժամանակ այդ իսկ օրէնքն է, որ սուլթանին հասցնում է «ինքնասպանութեան»: Այդ այն էր, որ կառավարութեան կողմից բաշխողականների ահաբեկ խումբ կազմուեց և ուղարկուեց Բուլղարիա: Արիւնդուող վազրերի պէս նետուեցին նրանք գիւղեր ու քաղաքներ և, չխնայելով ծերութիւնն ու մանկութիւնը, ամեն մի պատահածը պատառ պատառ անելով, քրիստոնեայ Բուլղարիան մարդկային զոհերի կոյտեր շինեցին:

Ահա այդ միջոցում ևս հնչուեց Գլադստօնի խրոխտ ձայնը և իսկոյն հրապարակ եկաւ նրա «Բուլղարիայի կոտորածը և արեւելեան հարցը» վերնագրով գրքովը: Այդ գրքովով նա հրաւիրում էր Անգլիայի կառավարութեան միանալ Ռուսիայի հետ և ազատութիւն շնոր-

հել տանջուող, ճնշուող ժողովրդին— ազատութիւն կիսալուանի առաջ անարգուած խաչին և բարբարոսի ձեռով ցեխը նետուած աւետարանին:

Տարաբաղտաբար այդ ժամանակ Անգլիայի առաջին նախարարը այլ հայեացք ունէր տաճկական կառավարութեան վերայ: Նա տակաւին պնդում էր սուլթանի յարատեւութիւնը և մինչև անգամ խէթ աչքով էր նայում ազատութեան կարօտ սլաւոնների վերայ: Սակայն Գլադստօնը չէր լռում և իւր հզօր ձայնը հասցնելով Անգլիայի սահմաններից դուրս, փրկութիւն, ազատութիւն էր գոչում աշխարհի ճնշուածների համար:

Եօթնասնական թուականներին ազատուեցին Սերբիան, Չերնոգորիան և Բօլգարիան, իսկ իննըսնական թուականին հերթը հասաւ դարերով արտասուող Տաճկա-Հայաստանին...

Եւ այսպէս ամբողջ վաթսուն և հինգ տարի Վիլիամ Գլադստօնը աւետարանը կրօքին սղմած, անընկճուն ժայռի պէս, անյողդողդ հաւատով և անվեհեր հօգով քաջ ախոյեան հանգիսացաւ աշխարհի ճնշուածների, խեղճերի և արտասուողների համար:

Եւ տասնևիններորդ դարը համընթաց գլորւում էր նրա կեանքի հետ լցնելով պատմութեան էջերը շարունակ արտասուքով և ողբով:

Կ.

Մեր հրատարակութեամբ լոյս տեսնող «Իւլան Հայոց պատմութեան» ժողովածուի Դ. գիրքը, մի ստուար հատոր, այս օրերս լոյս կտեսնի. այդ հատորը բովանդակում է իւր մէջ Ղուկաս կաթողիկոսի կոնդակներն ու նոցանից քաղուածքներ:

Պատրաստում ենք հետևեալ հատորը, որի մէջ կը